ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Բագուի «Каспiй» օրաթերթի խմբագրութիւնը Էջմիածին ուղարկել է հետեւեալ հեռագիրը.

«Каспiй»-ի խմբագրութիւնը, հայ տառերի և տպագրութեան յօբելեանների օրը, ողջոյն ու շնորհաւորանք է առաքում Էջմիածնին և յանձին նրա՝ հայ ժողովրդին, որ տօնում է իր դարաւոր կուլտուրական աշխատանքի տօնը հարևան-ժողովուրդների ընդհանուր ընտանիքի մէջ, յանուն համերաշխութեան ու ապագայ սերունդների բարեկեցութեան»։

—

Թիֆլիսի մէշչանների հասարակութեան աւագ Բարսեղ Առաքելեանը ուղարկել է հետեւեալ հեռագիրը Էջմիածին յանուն Վեհափառ Կաթողիկոս Գէորգ Ե-ի.

«Թիֆլիսի մօքալաքների և մէշչանների բազմատարր ու բազմահազար հասարակութիւնը հանուր Հայկազեան ժողովրդի ազգային տօնի այս ամենանշանաւոր օրը ամենահնազանդօրէն շնորհաւորելով Ձերդ Սրբութեան և նախաթոռ Էջմիածնին մեծ յօբելեանը՝ որդիական բարեմաղթութիւններ է առաքում, որպէսզի կրկին բարգաւաճի հայ դպրութիւնը Ձեր Վեհափառութեան բարձր հովանու տակ. խնդրում է Ամենակարող Աստուծուն իմաստացնէ Ձեր հօտը՝ առաջվայ նման պաշտելու մայրենի լուսաւորչական եկեղեցին, մայրենի լեզուն, հաստատ գիտակցելով որ առանց այդ փակտորների չի կարող ազգը գոյութիւն ունենալ։ Թոյլ տուէք ինձ ևս, Վեհափառ, իմ բուռն բարեմաղթութիւնները անել և բոլոր հայերի հետ միասին բացագանչել. «Հայոց գիր, բան, դպրութիւն, ծլի՛ր, ծաղկի՛ր օրն ի բուն»...

—

Նորին Վեհափառութիւնը բարեհաճել է Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի անունով ուղարկել այսպիսի հեռագիր.

«Շնորհակալ եմ շնորհաւորելու ու բարեմաղթութիւնների համար։ Օրհնում եմ ձեզ, քաղաքային դումայի բոլոր անդամներին։

—

«Зак.»-ն երէկվայ համարում մի լուր է տուել, թէ Թիֆլիսում յօբելեանական հանդէսների ամբողջ ցերեմօնիալի վրա հըսկում էր Գիւտ աւ. քահ. Աղանեան. կարծէք դրանով լրագիրը կամենում է յիշեալ հանդէսների ժամանակ տիրող անկարգութիւնների ամբողջ պատասխանատուութիւնը ձգել այդ քահանայի վրա։ Դա հազիւ թէ ճիշդ լինի։